ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ավելի քան 50 տարվա հարուստ կենսագրություն ունեցող ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը տնտեսագիտության բնագավառի հանրապետությունում միակ գիտահետազոտական ինստիտուտն է: ՀՀ կառավարության՝ 2007 թվականի մարտի 7-ի թիվ 271-Ա որոշմամբ հանրապետությունում գործող ճյուղային երեք գիտահետազոտական ինստիտուտները վերակազմակերպվեցին և միացվեցին կեսդարյա պատմություն ունեցող ակադեմիական ինստիտուտին: Ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ***Վլադիմիր Հարությունյանը*** հաջողությամբ ու սեղմ ժամկետում ավարտին հասցնելով ինստիտուտների վերակազմակերպման ու միացման բարդ գործընթացը, ձևավորեց նոր ու երիտասարդացված գիտական կոլեկտիվը, հետազոտությունների գերակա ուղղությունները, ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը՝ կազմակերպելով նաև գիտական հոդվածների ծավալուն ժողովածուի առաջին հրատարակումը նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրներին:

Ինստիտուտի գործունեության արդյունքներից արժանահիշատակ են գիտական հետազոտությունների տեսագործնական ուղղվածությունը և դրանց արդյունքների ներդրման ուղղությամբ ջանքերի գործադրումը, երիտասարդ գիտական կադրերի պատրաստումը և ատենախոսությունների հաջող պաշտպանությունների կազմակերպումը, գիտական հոդվածների ծավալուն ժողովածուի սույն՝ երկրորդ հրապարակումը և այլն, որոնց գծով նոր ձեռքբերումների ուղղությամբ մենք մեր աջակցությունն ենք հայտնում ինստիտուտի տնօրենին, որը հմտորեն ղեկավարում է բազմանդամ գիտական կոլեկտիվը և ապահովում նրա արդյունավետ գործունեությունը:

Ժողովածուի գիտական հոդվածները ինստիտուտի գիտաշխատողների, հայցորդների ու ասպիրանտների երկարատև հետազոտական աշխատանքի արդյունքն են, որոնք կարող են օգտակար լինել այդ հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Խմբագրական խորհուրդը շնորհակալությամբ կընդունի ընթերցողի արձագանքները ժողովածուի վերաբերյալ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ